




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9750



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОССТАНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

Ս. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

ԿԻՄ-Ի ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

ԿԻՄ-Ի ՍԵԿՑԻԱՆԵՐԸ
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

ՊԵՏԶՐԱՏ ՓԵՐԵՎԱՆ 1931

3 KIM
4 - 99

24 SEP 2006

CA 527
106

ЗКНМ
4-99

Ս. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

1 DEC 2009

ԿԻՄ-Ի ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

ԿԻՄ-Ի ՍԵՎՑԻԱՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՐՏԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿԻՄ-Ի ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

ՄԵԽԱՆԻԶՄԱՅԻԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ- ԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Արտադրական ոլորտում մեխանիզացիայի բնորոշ կերպ-
աբերական զարգացման վերջերից, հնարավորություն տալիս արհեստա-
նոցներում և գործարաններում տասնյակ հազարավոր յերիտա-
սարդ բանվորներ և յերեսաներ աշխատեցնելու: Հետագայում, մե-
խանիզացիայի ասպարիզում արված նվաճումների ու կապիտալիս-
տական ռացիոնալացման հետևանքով՝ հետզհետե ավելացավ բան-
վոր յերիտասարդության տեսակարար կշիռը արտադրության մեջ:
Վորակյալ բանվորների աշխատանքը կատարում էր մեքենան, վորդ
կարող էր բանեցնել վոչ վորակյալ բանվորը, նույնիսկ յերեսան:

1907 թվին Գերմանիայում հաշվվում էր յերկու միլիոն փոք-
րահասակ բանվոր՝ 8-14-ից մինչև 17 տարեկան, փորոնք աշխա-
տում էլին որակյան 10-12 ժամ, իսկ 1912 թվին, Շվեյցարիայում
5 չափահաս բանվորին համարում էր մեկ անչափահաս բանվոր: Այ-
սոր Չինաստանում տեքստիլ, մետաքս-գործվածքային, ծխախո-
տի, լուցիլու և այլ արդյունաբերական ճյուղերում բանվորների
70-90 տոկոսը յերիտասարդ բանվորներ և յերեսաններ էին:

Մեխանիզացիայի զարգացումը աշխատանքը վերածելով պարզ
ֆունկցիաների, անպետք էր դարձնում և՛ վորակը, և՛ մկանային
ուժը, այնպես վոր կապիտալիստը հնարավորություն ուներ մեծա-
հասակ վորակյալ բանվորները փոխարինել անվորակ և անչա-
փահաս բանվորներով, վորոնք և՛ ավելի էժան էլին ծախում իրենց
բանվորական ուժը, և՛ ավելի լոյալ ու համբերատար էլին աշխա-
տում: 6-10 տարեկան յերեսանները 10-12 ժամ աշխատում էլին
չնչին վարձատրությամբ, վորի հետևանքով նրանք հյուծվում ու
չուտով մահանում էլին: Տեղի յեր ունենում «Մանուկների հերով-
դեսյան կոտորած»: 1921 թվին Գերմանիայի Թյուրինգիա արդյու-
նաբերական շրջանում կատարած հետադոտությունը ցույց տվեց,
վոր 100 անչափահաս աշխատավորից 64-ը հիվանդ և հյուծված էր:



59147-66

Հ. Ա. ԱՐՄԱՆԻԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Աշխատավոր յերիտասարդությունը ֆեոդալական-կապիտալիստական շահագործման պայմաններում պաշտպանելու համար իր կյանքը, իր տնտեսական, կուլտուրական պահանջները, պետք է կազմակերպվեն ընդդեմ նոր ծաղկող արդյունաբերական կապիտալի:

«Հիմնական գործոնը — ասում է ընկ. Կլարա Յետկինը — վոր առաջ բերեց յերիտասարդական արդյունաբերական շարժում, դա կապիտալիստական սխտեմն է»: Ֆեոդալական, և ապա կապիտալիստական վայրագ շահագործումն էր, վոր ծնեց արդյունաբերական յերիտասարդական շարժումը:

Չարժե կանգ առնել հիմնովին սխալ, հակամարքսիստական աշխատքի վրա, թե յերիտասարդական արդյունաբերական շարժումը, դա արվեստականորեն ստեղծվեց, կազմակերպվեց հին սոցիալ գեմոկրատների կողմից: «Պրոլետարական յերիտասարդական շարժումը — ասում է Կարլ Լիբկնիցտը — հին կուսակցական գործիչներն արհեստական կերպով չստեղծեցին, նա արդյունք է բանվոր յերիտասարդության հեղափոխական վոգու առաջացման: Շարժման ծնունդն ու զարգացումը ընթացել է փոթորիկի ու պայքարի միջով»:

Կապիտալիստական արտադրական-հասարակական սխտեմն էր, վոր ստեղծեց, ինչպես բանվորական, նույնպես և բանվոր յերիտասարդության հեղափոխական շարժումը:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերիտասարդական կազմակերպությունների մենք հանդիպում ենք դեռ ևս 1848 թվին Ավստրիայում՝ հեղափոխության ժամանակ: Այդ թվականին արհեստավոր յերիտասարդների կազմակերպություններ կային վոչ միայն Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում, այլ և մի քանի այլ քաղաքներում: Բայց չուտով, հեղափոխության սլարտության հետ, կազմալուծվում են այս աշակերտավարպետացուների միությունները:

Դրանից հետո, բավականին ուժեղ յերիտասարդական պրոլետարական կազմակերպություններ ստեղծվում են Հոլլանդիայում՝ 1885 թվին, Բելգիայում՝ 1886 թվին և Իտալիայում՝ 1894 թվին:

1885 թվին տնտեսական սուր ճգնաժամ էր տիրում Բելգիայում: Բանվոր դասակարգը խոշոր ցույցեր կազմակերպեց, վորոնք արյունալի վերջավորություն ունեցան: Այդ շարժումների միջոցով ծնունդ առավ պրոլետարական յերիտասարդական ուժեղագույն կազմակերպությունը — «Յերիտասարդական գվարդիան», վոր պրոլետարական յերիտասարդական մասսաները կարողացավ լավագույն կերպով կազմակերպել: «Յերիտասարդ գվարդիան» իր աշխատանքի հիմքում ունեւ պայքար միլիտարիզմի դեմ: 1887 թվին հունվարից՝ «Յերիտասարդ գվարդիան» սկսեց հրատարակել առաջին յերիտասարդական հակամիլիտարիստական թերթը՝ «de Lotoling»: Բելգիայից հետո մյուս յերկրներում ստեղծված յերիտասարդական կազմակերպությունների խոշոր տոկոսը խաղաղ բնույթ կրող տնտեսական, կուլտուրական խնդիրներով էր զբաղվում: Շատ քիչ էր այն կազմակերպությունների թիվը, վորոնք կոչվում էին թե միլիտարիզմի դեմ և թե ցուցարներում ելին տնտեսա-քաղաքական ակտիվություն:

ՅԵՐԻՏՇԱՐԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՅԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Այս ժամանակաշրջանում կազմակերպությունները թույլ էլին, բացակայում էր փոխադարձ կապը: Ղեկավարությունը համարյա դոյություն չուներ: Բացակայում էր վոչ միայն միջազգային, այլև ազգային միավորումը:

Պրոլետարական յերիտասարդական շարժման մեջ ազգային միավորումներ սկսում են առաջ գալ միայն 1900 թվին վերջերին: Նույն թվականներին Կարլ Լիբկնիցտը Գերմանիայում, «Յերիտասարդ գվարդիայի» ղեկավար Դեմմը Բելգիայում և ուրիշներն սկսում են նախապատրաստական աշխատանք տանել պրոլետարական յերիտասարդական շարժման միջազգային միավորում ստեղծելու համար: Դեմմը, Լյուտիկ Ֆրանգին, Կարլ Լիբկնիցտին և յերիտաշարժման մյուս ղեկավարներին միայն 1907 թվին հաջողվում է Շտուտգարդում (Գերմանիա) հրավիրել սոցիալիստական յերիտասարդության առաջին միջազգային կոնֆերանսը: Կոնֆերանսին մասնակցում էին 9 յերկրների — Գերմանիայի, Իտալիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Անգլիայի, Իսպանիայի, Հոլլանդիայի, Շվեդիայի և հեռավոր Ավստրալիայի յերիտասարդական պրոլետարական կազմակերպությունների ղեկավարները: Այս կոնֆերանսով ավարտվում է սոցիալիստական յերիտասարդական շարժման առաջին շրջանը:

Պիտի ասել, վոր 1905 թ. ուսանական հեղափոխութեան հզօր շունչը դգալի յեր կոնֆերանսի վրա, վորի վորոշումները տնտեսա-կան, լուսավորական և հակամիլիտարիստական խնդիրներն մասին, իրենց վրա կրում են ուժեղ հեղափոխական դրոշմ:

Կոնֆերանսում աչքի ընկնող, ղեկավար դեր եր տանում միջազգային պրոլետարական յերիտասարդական շարժման ամենա-կարկառուն գեմքերից կարլ Լիքկնեստը, վոր գեկուցեց միլիտա-րիզմի գեմ տարվելիք պայքարի մասին:

Կոնֆերանսում պայքար եր տարվում անարխո-սինդիկա-լիստական ձգտումներ, զաղափարներ գեմ, վորն այդ ժամանակ բավականին ուժեղ եր պրոլետարական յերիտասարդութեան մեջ: Այդ պիտի բացատրել նրանով, վոր յերիտասարդական շրջանում գերելիսում ելին մանր-բուրժուական անարխիստներն ու սինդի-կալիստները, վորոնք իրենց հեղափոխական ֆրազիոլոգիայով բա-վականին ուժեղ ազդեցութեան ելին թողել յերիտասարդութեան վրա:

Շտուտգարդի կոնֆերանսում հիմք դրվեց սոցիալիստական յերիտասարդական ինտերնացիոնալի, ընտրվեց միջազգային բյու-րո: Սակայն միաժամանակ վճռական սխալ կատարվեց կադա-կերաչեական ասպարիզում՝ ընդունելով, վոր զանազան յերկրների սոցիալիստական յերիտասարդական կադակերպութեանները մի-ջազգային բյուրոյի հետ կապ պետք ե պահպանեն սեղի սոցիալ-դեմոկրատական կադակերպութեանների բյուրոկրատիայի միջո-ցով: Դրա հետևանքով 1907 թվին իսկ՝ յերիտասարդական սո-ցիալիստական ինտերնացիոնալն իր հեղափոխական գեմքը կորց-րեց: Նրա մեջ գերելիսեց ուժեղորմի քայքայիչ ազդեցութեանը:

Սակայն և այնպես, Շտուտգարդի կոնֆերանսը հսկայական դեր ունեցավ միջազգային յերիտասարդական պրոլետարական-հե-ղափոխական շարժման զարգացման դործում:

20-րդ դարի սկիզբը հանդիսանում ե ուժեղորմի ծաղկման շրջանը, վորը գեպի քայքայում տարավ պրոլետարական հեղափո-խական շարժումը: Ռեֆորմիզմի գերելիսումը պրոլետարական շարժման մեջ, պիտի բացատրել նրանով, վոր այդ ժամանակաշր-ջանում ուժեղացել եր դադութեան թալանը, վորը հնարավորու-թեան եր տալիս կապիտալիստներին ավելի վճարելու, և համեմա-տաբար բարելավելու պրոլետարիատի վորոշ ողակների (վերնախա-վի) տնտեսական դրութեանը:

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ «ԽԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Շտուտգարդի կոնֆերանսի (1907 թ.) վորոշումների կենսագոր-ծումը տնտեսական, լուսավորական խնդիրներում և միլիտարիզմի գեմ մղվելիք պայքարում խոշոր դժվարութեան բաղկվեց՝ սոցիա-լիստական յերիտասարդական կադակերպութեանների վրա ու-ժեղորմիստական սոցիալ-դեմոկրատիայի «խնամակալութեան» պետ-ճառով:

Սոցիալ-դեմոկրատական և արհմիութենական բյուրոկրատիան վախենալով յերիտասարդական կադակերպութեանների հեղափո-խական գործունեյութեանից, բաց թողեց «Յերիտասարդութեանը չպետք ե գրավիլ քաղաքականութեանը» լողոնքը, իր քայքայիչ ազդեցութեանը յենթարկելով յերիտասարդական պրոլետարական կադակերպութեանները: Արդեն 1908 թվին, Գերմանիայում, կուսակցական վերնախավի համաձայնութեամբ լիկվիդացիայի յենթարկվեց պատանեկական պրոլետարական շարժումը: Գերմա-նական սոցիալ-դեմոկրատիայի Նյուրեմբերգյան համագումարը և արհմիութեանների համագումարը Համբուրգում, հայտարարեցին, վոր՝ յերիտասարդական ինֆնուրայն կազմակերպութեաններ ու-նենալը ավելորդ ե: Նյուրեմբերգյան համագումարի բանաձեւի և ցուցմունքների հիման վրա ստեղծվեցին, այսպես կոչված «Յերի-տասարդութեան շրջանում կատարվող աշխատանքի կոմիտեներ», վորոնք ղեկավարվում ելին սոցիալ-դեմոկրատական և վորոշ չա-վով ել պրոֆիտիստական ներկայացուցիչների կողմից: Այդ դե-կավարութեան ընույթն ու նպատակները հասկանալու համար, բա-վական ե այստեղ մեջ բերել Նյուրեմբերգյան համագումարի բա-նաձեւի համապատասխան կետը, վորտեղ ասված ե՝ «Համագու-մանն այն կարծիքին ե, վոր յերիտասարդ բանվորների ու բանվո-րուհիների զարգացման ձգտումը ինչ չափով վոր դրա նպատակն ե ձեռք բերել կրթութեան և մասնակցել քաղաքական և արհեստա-կական կյանքին, — աշխատավորների ազատագրական պայքարի կա-րեւորագույն ճյուղերից մեկն ե: Այդ խնդիրն իրականացվում ե յերիտասարդութեան դիտակցութեան աստիճանին հարմարեցրած և նրանց համար հասկանալի դասախոսութեաններ կադակերպելու միջոցով: Իսկ այդ դասախոսութեանների նյութը պետք ե վերցնել բնական դիտութեանների, առողջապահութեան, գրականութեան, արվեստների, տեխնիկայի, որենագիտութեան, քաղաքատնտեսու-

թյան, պատմութեան, քաղաքականութեան և արհմիութեաններէ
զործնեցութեան աստարեղից: Բացի այդ, անհրաժեշտ է հոգալ նաեւ
խաղեր և սպորտային զվարճանքներ կազմակերպելու մասին, ընդ
վորում պետք է հետեւել, վոր վերջին տեսակէ զբաղմունքները յե-
րիտասարդութեան շահերն ու զործնեցութեանը միակողմանի
չդարձնեն: Բոլոր վերը թված խնդիրներէ իրականացման համար,
յերիտասարդութեան հատուկ կազմակերպութիւն ստեղծելը կոնգ-
րեսն ավելորդ է համարում»:

1910 թվին, Բեռլինում, տեղի ունեցավ Յերիտասարդական Ին-
տերնացիոնալի կոնֆերանսը, վորի վորոշումները վոչ միայն վո-
չինչ չափերացրին Շտուտգարդի կոնֆերանսի վորոշումներէ վրա,
այլ և այլ վորոշումները նույնիսկ նահանջ էին Շտուտգարդի վո-
րոշումներէ: Ինչպէս յերեւում է այս բոլորից, Շտուտգարդի
Ինտերնացիոնալը չկարողացավ իր դերը կատարել, վորպէս միջադ-
պային պրոլետարական յերիտասարդական շարժումը միավորողի:

Ընդ. Չիչերիքը «Ոչեքիկներ Յերիտասարդական Ինտերնացիոնա-
լի պատմութեանից» գրքում այս առթիւ գրում է՝ «Չի կարելի ա-
սել, վոր Ինտերնացիոնալի կողմից ճանաչված 1907 թ. միջադպային
բյուրոն խաղաց մեծ դեր՝ առանձին յերկրներում յերիտասարդա-
կան շարժման դարգացման համար: Բանվորական շարժման ռեակ-
ցիոն տարրերը, հատկապէս Գերմանական սոցիալ-դեմոկրատական,
կուսակցութեան առավել ևս ագդեցիկ, առավել ևս բյուրոկրատիկ
եղեմները քանի ելին քափում, վարպետի տարբեր յերկրների
պատանկական շարժումը չձուլվի ինտերնացիոնալ միասնալի
շարժման մեջ»:

Ֆրանսիայում և Հոլլանդիայում ևս 1911 թվին սոցիալիստներն
իրենց «Հոլմանավորութեանը» տարածում են տեղական սոցիալիս-
տական յերիտասարդական կազմակերպութեաններէ վրա, վորի հե-
տեւանքով նրանք ևս կորցնում են իրենց հեղափոխական դեմքը:

Մյուս կողմից, Յերկրորդ Ինտերնացիոնալի ղեկավարներն աչ-
խատում են Սոցիալիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի
միջադպային բյուրոն վերածել 2-րդ Ինտերնացիոնալի յենթարգ-
նի: Սակայն Իտալիայի, Շվեդիայի, Նորվեգիայի յերիտասարդա-
կան պրոլետարական կազմակերպութեաններն ընդգիծանում են սո-
ցիալ դեմոկրատիայի «խնամակալութեանը» և համարյա ամբող-
ջովին պահպանում են կազմակերպչական ինքնուրույնութեան,
պայքար մղելով սոցիալ ռեֆորմիզմի, սպորտուիզմի դեմ:

Նույն ժամանակներում, մի քանի յերկրներում յերիտասարդա-

կան սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեաններէ ձախ տար-
րերը սպորիցիոն դերք են բռնում, սկսում են առանձին իմբափո-
րումներ կազմել, պայքար մղելով սոցիալ-ռեֆորմիզմի դեմ: Այդ-
պիսի ուժեղ հեղափոխական սպորիցիոն իմբալ կազմակերպում է
Գերմանիայում, վորի ղեկավարները հանդիսանում են սոցիալ-դե-
մոկրատական կուսակցութեան ձախ տարրերը, հեղափոխական լի-
դերները, ինչպիսին են Կարլ Լիքկնեխտը, Կարա Յետկինը, Ռոզա
Լյաւկսենբուրգը, Մերիկը և այլն:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

Յերիտասարդական Ինտերնացիոնալի յերկրորդ կոնգրեսը, վո-
րը կայացավ 1910 թվին՝ Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում,
անցավ անուր և դժուր, վորովհետեւ այս թիւականներէն գերիշ-
խող ռեֆորմիզմը թուլացրել էր նրա մարտական հեղափոխական
թափը, մասնավորապէս Յերիտասարդական Ինտերնացիոնալի ղե-
կավար չըջանակներում, վորտեղ ուժեղ էր Յերկրորդ Ինտերնացիո-
նալի բյուրոկրատիայի ազդեցութեանն ու ղեկավարութեանը:

Յերկրորդ կոնգրեսը, վոչ թե զբաղվեց հեղափոխական-քաղա-
քական հրատալ հարցերով, այլ՝ խաղալ «կուլտուրական» աչխա-
տանքներով: Այս համագումարին մասնակցում էլին միմիայն ինը
յերկրներէից պատգամավորներ: Բացակայում էր Գերմանիայի
պատգամավորութեանը, վորովհետեւ նրա «խնամակալը» — գերմա-
նական սոցիալ դեմոկրատիան, թույլ չէր տվել գերմանական սո-
ցիալիստական յերիտասարդական կազմակերպութեանը՝ մոռնել
Յերիտասարդական Ինտերնացիոնալի մեջ: Այս համագումարը վերջ
տվեց յերիտասարդական կազմակերպութեաններէ հեղափոխական
ինքնուրույնութեանը և գործնեցութեանը: Համագումարն իր ըն-
դունած բանաձեւում ասում էր. «Յերիտասարդութեան սոցիալիս-
տական միութեանը, սոցիալ-դեմոկրատական կուսակցութեաններէ
և արհմիութեաններէ հետ միատեղ պիտի է աշխատի»:

ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

1912 թվին, Բաղելում (Շվեդիայի) կայացավ Յերիտասարդա-
կան Սոցիալիստական Ինտերնացիոնալի յերկրորդ կոնգրեսը: Այս
կոնգրեսը միայն քննարկեց հասունացող պատերազմի վտանգը և
կոչ արեց բոլոր յերկրներէ բանվոր յերիտասարդութեանը բոյկոտի

յենթարկել պատերազմը, ինչպես այդ արել եր դրանից քիչ առաջ
գումարված Յերկրորդ ինտերնացիոնալի կոնգրեսը:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

1914 թվի իմպերիալիստական պատերազմի սկզբին սոցիալիս-
տական յերիտասարդական կադմակերպությունները վերջ մասը
դավաճանեց պրոլետարիատին և սոցիալ ռեֆորմիզմի ճանապարհ-
հով կանգնեց «Հայրենիքի պաշտպանութեան» տեսակետի վրա: Սո-
ցիալ-ռեֆորմիզմի ճահիճը գլորվեց և Յերիտասարդական ինտեր-
նացիոնալի միջադպարին բյուրոյի քարտուղար Դաննեբերգը: Նույն-
իսկ յերիտասարդական սոցիալիստական ամենաուժեղ կադմակեր-
պությունը՝ գերմանական կադմակերպությունը, — վերջ պատե-
րազմի նախորդակին ունեւ 100.000-ից ավելի անդամներ, — յերկար
ժամանակ գերմանական սոցիալ-դեմոկրատական կադմակերպու-
թեան «խնամակալութեան» տակ մնալով՝ կորցրել եր իր հեղափո-
խական դեմքը: Պատերազմի ժամանակ նա դավաճանելով միջադ-
պարին բանվոր յերիտասարդութեանը, կամաւորական իմբեր ու-
ղարկեց Վիլհելմի իմպերիալիստական բանակը՝ «գերմանական
հայրենիքը պաշտպանելու» համար:

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Զնայած այս բոլորին, յերիտասարդական սոցիալիստական
կադմակերպություններն իրենց ամբողջութեան մեջ չդաւանանցին
պրոլետարական հեղափոխական շարժմանը: Իմպերիալիստական
պատերազմի սկզբից, և դրանից եւ առաջ, Իտալիայի «սոցիալիս-
տական յերիտասարդութեան» ուժեղ պայքար եր տանում իմպե-
րալիստական պատերազմի դեմ: Միութեան կենտկամը կադմակեր-
պի, բանակի մեջ սկսեց հակամիլիտարիստական աշխատանք տանել
բացատրելով պատերազմի իմպերիալիստական բնույթը, և կոչ ա-
րեւտասարդութեան կադմակերպութեան կենտկամը ուժեղ հալածանք-
քի յենթարկվեց և դեկաւարներին մեծ մասն սպանվեց կառավարու-
թեան կողմից:

ՇՎԵՏԱՐԻԱՅՈՒՄ

Ինչպես Իտալիայում, նույնպես և Շվեցարիայում յերիտասար-
դական սոցիալիստական կադմակերպությունն ուժեղ պայքար եր

տանում իմպերիալիստական պատերազմի, սոցիալ-չովինիզմի և
ուղորտունիզմի դեմ: Նա մեծ դեր խաղաց հենց պատերազմի ժամա-
նակ յերիտասարդական կադմակերպութ. միջադպարին կապը վե-
րականգնելու գործում: Այդ բանին ի հարկե մեծապես նպաստեց
վեջ աշխատանք Շվեցարիայի պատերազմող յերկիր չլինելը (չեզոք),
ինչքան այնտեղ ապրող ուս հեղափոխականների աշխատանքը: Լե-
նինը պատերազմի ընթացքում գտնվելով Շվեցարիայում, անսահ-
ման ուժ եր վատնում, բանվորներին բացատրելու, վեր տեղի ու-
նեցող պատերազմը՝ դա իմպերիալիստական պատերազմ և և, վերջ
դեմ պայքարի յեր հրավիրում նրանց:

ՄՅՈՒՍ ՅԵՐԿՐԵՆԵՐՈՒՄ

Ֆրանսիայում և Ավստրիայում, հենց պատերազմի սկզբից սո-
ցիալիստական յերիտասարդութեան կադմակերպությունները դա-
վաճանեցին միջադպարին բանվոր յերիտասարդութեանը, յենթարկ-
վելով Յերկրորդ ինտերնացիոնալի, տեղական սոցիալ-չովինիս-
տների ազդեցութեանը: Սակայն կարճ ժամանակից հետո ուղղելով
իրենց ոխալը՝ այդ յերկու կադմակերպություններն եւ կանգնեցին
ինտերնացիոնալիստական հողի վրա, պայքարեցին պատերազմի
դեմ:

Ամերիկայում, Ֆինլանդիայում, Իսպանիայում, Շվեդիայում,
Նորվեգիայում, Դանիայում յերիտասարդական սոցիալիստական
կադմակերպությունները կոչում եյին սոցիալ իմպերիալիզմի և
բանվորական շարժման ամենավտանգավոր թշնամու սոց. — ուղորտու-
նիզմի դեմ: Մանավանդ պատերազմի ընթացքում, այս կադմակեր-
պությունները ցուցաբերեցին ակտիւություն և հեղափոխական
մարտական վորոշ գործունեւութեան, դուրս գալով դավաճան սոց.
դեմոկրատիկ. կուսակցութեանների «խնամակալութեանից»: Բայց
և այնպես, նրանց մոտ պակասում եր հեղափոխական, մարքսիս-
տական աշխարհայացք, հեղափոխական տակտիկայի պլան: Պա-
տերազմի և միլիտարիզմի դեմ մղվող պայքարում: Նրանք առա-
ջարկում եյին «ընդհանուր զինաթափութեան» պացիֆիստական
դժգոյն լուրսը, փոխանակ միջադպարին պրոլետարական յերի-
տասարդութեանը կոչ անելու քաղաքացիական պատերազմի համար,
մի բան, — վեր Լենինը դեռևս Շվեցարիայում գտնված ժամանակ
քննադատեց առանձին հողմածներով, Շվեցարիայում հրատարակ-
վող «Յերիտասարդական ինտերնացիոնալ» հեղափոխական ժուռ-
նալում:

Միայն հոկտեմբերյան մեծ հեղափոխության հրաշունչը նոր-
բանց տվեց նոր թափ և հեղափոխական սրբալիկա, կանգնեցնելով
այդ կազմակերպությունները հակամիլիտարիստական պայքարի,
քաղաքացիական պատերազմի հեղափոխական ճանապարհի վրա:

«ՍՊԱՐՏԱԿԸ» ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐ- ԴԱԿԱՆ ՈՊՈԶԻՑԻԱՆ

Գերմանիայում յերիտասարդական սոցիալիստական ուղղիցիոն
հեղափոխական խմբակը, զոյուժյուն ունեւ դեռ ևս պատերազմեց
առաջ, բայց միայն պատերազմի ընթացքում նա ուժեղացավ, սկսեց
հակապատերազմական ուժեղ ազիտացիա տանել, մերկացնե-
լով յերիտասարդ սոցիալ-դավաճանների ու սոցիալ-դեմոկրատիա-
յի դավաճանական դեմքն ու արարքները: Այս ուղղիցիան սերտ
կապ եր պահպանում, հասակավոր բանվորների ընդհատակյա հե-
ղափոխական «Սպարտակ» կազմակերպության հետ, վորից հե-
տագայում ծնվեց գերմանական կոմկուլը:

Յերիտասարդական հեղափոխական խմբակները, իրենց դե-
կավարությունն ստանում էին «Սպարտակ»-ի ղեկավարներից՝
Կարլ Լիբկնեխտից և Ռոզա Լյուքսեմբուրգից:

Գերմանիայում այդ հեղափոխական ուղղիցիոն խմբակները
դեռ ևս 1916 թվի պատերազմի ընթացքում կոնֆերանս ունեցան
Յենայում, վորտեղ Կարլ Լիբկնեխտը ուժեղ յելուժ ունեցավ պա-
տերազմի և սոցիալ-դարձուրումի դեմ, ու ավելի սարացրեց կա-
պը հեղափոխական «Սպարտակի» և յերիտասարդական հեղափոխա-
կան ուղղիցիայի միջև: Այս կոնֆերանսում եր, վոր ուղղիցիոն յե-
րիտասարդական կազմակերպությունները միադան, վորից հե-
տագայում ծնունդ առավ գերմանական կոմսոմոլը:

ԲԵՌՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Պատերազմի ընթացքում՝ 1915 թվին, չիկեարական, իտալա-
րական և չիկեարական յերիտասարդական սոցիալիստական կազմա-
կերպություններն նախաձեռնությամբ, Շվեյցարիայի Բեռն քաղա-
քում հրավիրվեց յերիտասարդական սոցիալիստական կազմակեր-
պությունների միջազգային կոնֆերանս: Այս կոնֆերանսին մաս
նակցում էին 10 յերկրներից պատգամավորներ: Ֆրանսիական,
գերմանական, ավստրիական կազմակերպությունների կենտրոն-

ները պատգամավորներ չէին ուղարկել: Միայն Գերմանիայից
յեկել էին կենտրոնից անջատված խմբակների պատգամավոր-
ները: Այս կոնֆերանսին չեր մասնակցում նաև յերիտասարդա-
կան ինտերնացիոնալի միջազգային բյուրոյի քարտուղար՝ Դան-
նե-Բերգը:

Պատերազմի ընթացքում և հետագայում, այս կոնֆերանսն
ունեցավ հեղափոխական կարեվոր դեր: Ամբողջ Յերիտասար-
դական ինտերնացիոնալի պատմության մեջ բացառիկ տեղ է գրա-
վում Բեռլինի կոնֆերանսը, իր քաղաքական դրույթներով: Այս
կոնֆերանսում խոսվում եր վոչ թե կուլտուրական, լուսավորա-
կան խնդիրների կամ ակոհողի դեմ տարվող պայքարի մասին,
այլ քննվում եր պատերազմի դեմ պայքարի կանկրետ խնդիրները:
Յերիտասարդույթյունը քաղաքականության մասնակից դարձավ և
զրոհի դուրս յեկավ սոցիալ-դարձուրումի դեմ: Սակայն և
այնպես կոնֆերանսում պայքիֆիստական իդեոլոգիան մեծ դեր
խաղաց և զվեարկության ժամանակ՝ 5-ի դեմ 9-ով անցավ պայքի-
ֆիստական բանաձևով:

Բեռնի կոնֆերանսում պատերազմի և պատանեկական կադ-
մակերպությունների խնդիրների մասին ընդունված բանաձևում
ի միջի այդոց ասված է... «Ներկա պատերազմը բոլոր յերկրների
կառավարող դասակարգերի իմպերիալիստական քաղաքականու-
թյան հետևանքն է...»: Կոնֆերանսը բուռն կերպով բողոքում է
այն փորձերի դեմ, վորոնք յերիտասարդույթյան սոցիալիստական
կազմակերպությունները ծառայեցնում են բուրժուական միլի-
տարիզմին և դրանով բանվոր յերիտասարդույթյան ուշադրու-
թյունը շեղում իր իսկական խնդրից՝ սոցիալիստական դաստիա-
րակությունից և կապիտալիստական շահագործման ու միլիտա-
րիզմի դեմ կռվելուց...»

Կոնֆերանսը միջազգային բանվոր յերիտասարդությանը բա-
ցատրելով պատերազմի իմպերիալիստական էլուժյունը, բանա-
ձևվի վերջում պահանջում եր «Լիալատար զինաթափություն»:
Թեև այս պայքիֆիստական լոզունդ եր, սակայն և այնպես, Բեռնի
միջազգային կոնֆերանսն իր բոլոր վորոշումներով մեծ դեր խա-
ղաց բանվոր յերիտասարդության հեղափոխական դաստիարա-
կության և պատերազմի դեմ մղվող պայքարում:

Նմանապես Բեռնի կոնֆերանսում եր, վոր վորոշվեց «Յերի-
տասարդական Միջազգային որ» (ՄՅՈՒԴ) սահմանել սեպտեմբր-

քին, վորպեսզի այդ ուրը յերկտասարդական հեղափոխական մե-
ջադպային բոլոր կազմակերպութիւնները բաղդի ցույց և մի-
տինդներ կազմակերպեն, լոյզունդ ունենալով—պայքար միլիտա-
րիզմի, ինչպես նաև սոցիալիզմի դավանանք-յան դեմ, հա-
նուն կամուրիզմի:

Բեռնի կոնֆերանսը, մի քայլ առաջ տարավ Յերիտասար-
դական Ինտերնացիոնալի աշխատանքները: Յերիտասարդական
Ինտերնացիոնալի Յիւրիստի գտնվող միջադպային քարտուղարու-
թիւնը Բեռնի կոնֆերանսի վորոշումով սկսեց հրատարակել «Կո-
մունիստական Ինտերնացիոնալ» ժուռնալը, վորը 11 համար լույս
տեսավ պատերազմի ընթացքում և մեծ դեր խաղաց հեղափոխա-
կան շարժումների մեջ: Դրան աշխատակցում էին Լենինը, Լիբ-
կնեխտը, Ռադեկը, Զինովիեվը և այլն: Պատերազմի ժամանակ,
յերիտասարդական Ինտերնացիոնալի քարտուղարութիւնը կազ-
մակերպեց և ղեկավարեց միջադպային յերիտասարդական հակա-
միլիտարիստական շարժումը, ՄՅՈՒԴ-ի տարեկարձներին կազ-
մակերպեց ուժեղ դեմոնստրացիաներ, պատերազմի ընթացքում
տանելով բանվոր դատակարգի ավանգարդի դերը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅԳԱՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Յերբ հասկալոր բանվորների սոցիալ-դեմոկրատական կազ-
մակերպութիւնները հանուն «հայրենիքի պաշտպանութեան» դա-
վաճանական դիրքաւորման՝ կապիտալիստների հետ ձեռք-ձեռքի
մասնակցում էին աշխատավորական սաստանքի համաշխարհա-
յին կոտորածին, յերիտասարդական սոցիալիստական կազմակեր-
պութիւնների մեծամասնութիւնը թուրքովին ազատագրված ու-
ղիալ-դեմոկրատական ղեկավարների «Ինամակալութիւնից», ու-
ժեղ պայքար ևր տանում նրանց դեմ, պայքարում ևր իմպերիա-
լիստական պատերազմի դեմ: «Յերիտասարդական կազմակեր-
պութիւնների այս առաջապահական դերի «պտճառն» այն
ևր, վոր յերիտասարդութիւնը չի անցել պատմական զարգացման
այն շրջանը, վոր «ձեռքերն» են անցել, վորով և տարբերվում են
«ձեռքերից». յերիտասարդութիւնը ստիպված և յեղել աշխատելու
վոչ թե կապիտալիզմի «խաղաղ», «նորմալ» դարգացման տարինե-
րում, վորոնք համաձայնողական քաղաքականութիւն են առա-
ջացում, այլ կապիտալիստական հասարակարգի ճշմարտի և

պատերազմի վորոշակալ տարիներին: Յերիտասարդութեանը
բառի լիակատար իմաստով «պատերազմի և հեղափոխութեան»
տարբերը ե»: (Միւրոշեվսկի):

Ահա ինչու հետպատերազմյան հեղափոխութիւններում աշխա-
տավոր յերիտասարդութիւնը կանգնել ևր բարեկազմերի վրա
և պայքարում ևր առաջին շարքերում:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Ստիպան, համաշխարհային իմպերիալիստական պատերազ-
մին ունեցավ և այն հետեւանքը, վոր արագացրեց պրոլետարա-
կան հեղափոխական շարժման բախը և նրա բշուրեղացումը:
Իմպերիալիստական պատերազմը մեծապես ողնեց համաշխար-
հային սոցիալ-դեմոկրատական շարժման բշուրեղացմանը, ջո-
կելով իսկական հեղափոխական լենինիստներին՝ սոցիալ շովի-
նիստներին:

Իմպերիալիստական պատերազմի առաջ բերած սովի, կոտո-
րածի և քայքայվածութեան անմիջապես հետեւանքը յեղավ կա-
պիտալիզմի կրիզիսը: Այդ պայմաններում ծնվեց Հոկտեմբերյան
Հեղափոխութիւնը, ապա 1919 թ. սկզբներին՝ հունգարական,
գերմանական և ավելի ուշ բուլղարական հեղափոխութիւնները:
Այս հեղափոխութիւնների ամենահոռալի հենարանն ևր յերիտա-
սարդ պրոլետարիստը, վորը կովում և առաջավոր բարեկազմե-
րում:

1919 թվի սկզբներին, յերբ Յեւրոպայում հայտնի դարձավ
Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը սոցիալ-դեմո-
կրատական ձախ, իսկապես հեղափոխական կազմակերպութիւն-
ների մասնակցութեամբ, Իտալիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի
և Շվեդիայի յերիտասարդական սոցիալիստական կազմակերպու-
թիւններն առաջիններին էին, վոր հարեցին Կոմինտերնի ծրա-
դրին: Այս յերիտասարդական պրոլետարական կազմակերպու-
թիւններն էին, վոր հետագայում իրենց շարքերից Կոմինտերնին
տվեցին պրոպագանդիստների, բանվորական հեղափոխական շար-
ժման ղեկավարների ուժեղ կազմը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Հոկտեմբերյան հեղափոխությունը խոշոր աղբյուրություն էր դեպի Յեփրոսյան պրոլետարական շարժման վրա ընդհանրապես, յերիտասարդական շարժման վրա մասնավորապես, մի շարժում, վորն արդեն հեղափոխական վերելք էր ապրում:

Խոսելով Հոկտեմբերյան հեղափոխության մասին, միջազգային յերիտասարդական սոցիալիստական շարժման ղեկավարներից ընկ. Մյունցենբերգը 1917 թվին «Յերիտասարդական ինտերնացիոնալ» ժուրնալում գրում էր՝ «Յերիտասարդությունը յերիտասարդական ժամանակ, նրա մղած պրոպագանդան, նրա գործունեությունը, նրա տված գոհերը, այս բոլորն իրավունք են տալիս սոցիալիստ յերիտասարդությանը՝ իրեն հարազատ և իր սրտին մոտիկ զգալու ուսական հեղափոխությունն ու վոգելորվելու նրանով»:

Յերիտասարդության հեղափոխական պայքարը միջազգային յերիտասարդական հեղափոխական շտաբի կարիք էր դրում: Անհրաժեշտություն էր զգացվում մի նոր, իսկապես հեղափոխական, յերիտասարդական ինտերնացիոնալի: Յեվ ահա, 1915 թվին, Բեռնի (Շվեյցարիա) կոնֆերանսում ընտրված յերիտասարդական սոցիալիստական կազմակերպությունների միջազգային բյուրոն մի կողմից, ՌԿՅԵՄ-ի կենտկոմը մյուս կողմից, իրարից անջատ կոնգրեսներ են ուղղում հրավիրել: Առաջինը կոնգրեսի վայր է նշանակում Շվեյցարիայի Բազել քաղաքը, յերկրորդը՝ Մոսկվան: Այս անջատ կոնգրեսները դեռևս տեղի չունեցած, յերկու կողմերը համաձայնվում են միացյալ կոնգրես ունենալ, վորի վայր են նշանակում Բուդապեշտը (Հունգարիայի մայրաքաղաք), սակայն Հունգարիայի խորհրդային հանրապետության (Ավստրիայի մայրաքաղաք), վորտեղ պետք է կայանար 1909 թ. սեպտեմբեր 25-ին. բայց վորովհետև մի շարք յերկրներից պատգամավորներ չէին յեկել, կոնգրեսը հետաձգվում է և տեղի յե ունենում միայն խորհրդակցություն, ընտրվում է ժամանակավոր կոմիտե, վորի կազմի մեջ մտնում են միջազգային բյուրոյի յերկու անդամներ, (Մյունցենբերգ և Շվեյցեր), Ռուսաստանի ներկայացուցիչը (Շադկին), Գերմանիայիցը (Գեյլման), և Սկանդինավյան յերկրների ներկայացուցիչները: Ռուսական և գերմանական ներկայացուցիչներն անմիջապես իրենց հեղափո-

խական աղբյուրությունն են դործում ժամանակավոր կոմիտեյի վրա, վորն անցնում է հեղափոխական աշխատանքի, նախապատրաստելով ԿԻՄ-ի առաջին կոնգրեսը, վորը 1919 թվին նոյեմբերի 20-26-ին հրավիրվում է Բեռլինում՝ 14 յերկրների յերիտասարդական պրոլետարական ձախ կազմակերպությունների մասնակցությամբ:

Այս կոնգրեսի վորտեղները մեծ աղբյուրություն ունեցան համաշխարհային յերիտասարդական հեղափոխական շարժման վրա:

Կոնգրեսի հիմնական հարցերից մեկն էր Կոմիտեի տեղի գործը ընտրությունը, վորի նախադիմը մշակված էր ՌԿՅԵՄ-ի կողմից: Ծրագրերը հարց էր դնում պաշտպանել Կոմիտեի կազմակերպությունները և պրոլետարական յերիտասարդական լայն մասսաներին տալ հեղափոխական դաստիարակություն: Կենդրեսը միջազգային միավոր և ղեկավար շտաբ ճանաչեց «Յերիտասարդական Կոմունիստական ինտերնացիոնալին»: Այստեղ մահացու և վերջնական հարված տալով պացիֆիզմը և «ընդհանուր դեմոկրատիային» լուղունդը փոխարինվեց բանվոր դասակարգի դեմոկրատիայի, քաղաքացիական պատերազմի լուղունդով: Այստեղ էր, վոր պրոլետարական յերիտասարդական շարժումը խոշոր չափով կոնսուլիտացիայի յենթարկվեց՝ վորպես կոմունիստական յերիտասարդական շարժում, վորպես վոխերիմ թշնամի սոցիալ-պացիֆիզմի տակտիկային և իդեոլոգիային: Կոնգրեսը մի նոր շրջան բաց արեց միջազգային յերիտասարդական շարժման մեջ, իսկապես հեղափոխական կոմունիստական հունի մեջ դրեց այդ շարժումը: Համոզվելու համար դրանում, և ծանոթանալու համար ԿԻՄ-ի առաջին կոնգրեսի քաղաքական դրույթներին, բավական է կարդալ ԿԻՄ-ի Մանիֆեստը, վորը պատմության մեջ կմնա միջազգային կոմունիստական յերիտասարդության առաջին հեղափոխական փաստաթուղթը:

ԿԻՄ-Ի ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

ԿԻՄ-ի առաջին կոնգրեսը, դա զուգադիպում է կազմակերպչական շրջանին: Այդ կոնգրեսը շատ «անշուք» էր: Նրան մասնակցում էին 14 յերկրների պատգամավորներ, վորոնք ներկայացնում էին մոտ 220.000 անդամներ, 1919—21 թվերի ընթացքում միայն փաստորեն ստեղծվում է յերիտասարդական կոմունիստական ինտերնացիոնալը: 1921 թվին ԿԻՄ-ն իր մեջ ընդգրկում էր

ԿԻՄ-ի անցած ուղին—2



43 յերկրները յերկտասարդական կազմակերպություններին՝ 800.000 անդամներով:

Այս շրջանը հանդիսացավ ԿԻՄ-ի սեկցիաների իդեոլոգիական ամբողջական կոմունիստական դաստիարակության շրջանը:

Յերկրորդ կոնգրեսից առաջ՝ 1919—20 թվերի կեսերում, տիրող հեղափոխական դրությունը՝ յեվրոպական յերկրներին ԿԻՄ-ի սեկցիաներին հնարավորություն տվեց ծավալուն աշխատանք առնելու ԿԻՄ-ը վերածելու համար համաշխարհային կազմակերպության: Դա մի շրջան էր բարեկադային կոլիների, կատաղի պայքարի, սոցիալ-դպրոտունիզմի դեմ: Այդ պայքարում կոմիտեում ու կոմունիստներն դաստիարակվում էին ԿԻՄ-ի սեկցիաները:

1919—20 թվի հեղափոխական դրությունն իր ազդեցությունն ունեցավ ամբողջ յերկտասարդական շարժման վրա: Գերմանական սոցիալիստական յերկտասարդական միությունների մեջ աչք-սեցին խմորումներ, աճեց ձախ թեվը, վորը հետագայում մտավ կոմունիստական յերկտասարդական շարժերը: Նույնը առավել կամ նվազ չափով տեղի ունեցավ նաև մյուս յերկրներում:

Գերմանական կոմսոմովը 20 թվին արդեն 30.000 անդամ ուներ: Նա պայքարում էր յերկտասարդական մասսաների նվաճման համար, պայքարում էր պրոլետարական հեղափոխության համար և հանդիսանում էր ԿԻՄ-ի լավագույն սեկցիան:

Չեխոսլովակիայում յերեք յերկտասարդական կազմակերպություններ, յերկար պայքարից հետո, 1921 թվի սկզբներին, մտադ ԿԻՄ-ի շարժերը:

Ֆրանսիայում կոմյերիտմիությունն ստեղծվեց և ամբողջով լրացավ շատ դժվարին պայմաններում՝ ցենսորիստների դեմ ուժեղ պայքարից հետո: Յենտրիստները, վորոնք մոտ կապ ունեյին բնորոշական միությունների հետ, ձախ ֆրազներով ուղղում էին վերականգնել Շատոլոգարդում ստեղծված յերկտասարդական ինտերնացիոնալը և այդ հակադրել ԿԻՄ-ին: Ուպրոտունիստական գեկավարության ու ցենտրիստների դեմ միտմ համառ պայքարից հետո հաղթանակեց կոմունիստական յերկտասարդական միությունը:

Իտալիայում կոմյերիտմիությունն ակտիվ պայքար տարավ ցենտրիստների ու ռեֆորմիստների դեմ՝ Կոմինտերնի վարչաշում-ների կենտրոնացման ուղիով: Նա ակտիվ պայքար տարավ մասսաների նվաճման համար, և կտրճ ժամանակամիջոցում իր շարժերն ընդգրկեց 50.000 հոգի: Իտալական կոմյերիտմիությունը

հանդիսացավ կոմկուսի լավագույն ուժականը՝ կոմունիստական հեղափոխական տակտիկայի կիրառման գործում:

Հարավ-Սլավիայում, Շվեդարիայում, Դանիայում, Շվեդիայում, Նարվեգիայում, Ֆինլանդիայում կոմունիստական յերկտասարդական կազմակերպություններն ուժեղ պայքար ծավալեցին սոցիալ-դպրոտունիզմի դեմ, և այսպիսով հանդիսացան յերեք յերկրների կոմունիստական կուսակցությունների լավագույն հենարանները: Այդ ժամանակամիջոցում ամբողջ Բալկաններում կազմվեցին կոմունիստական յերկտասարդական միություններ: 1919—20 թ. ԿԻՄ-ը խոշոր աշխատանք տարավ յերկտասարդական նվաճման համար, պայքարեց սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների և իդեոլոգիայի դեմ ու բանվոր յերկտասարդությունն առաջնորդեց քաղաքական պայքարի:

ԿԻՄ-Ի ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

1921 թվին Մոսկվայում կայացավ ԿԻՄ-ի յերկրորդ կոնգրեսը, վորն իր որակարգում ունեւ 1. հաշվի առնել համաշխարհային բանվորական շարժման դրությունը, 2. վորոշել միջազգային կոմունիստական շարժման մեջ կոմսոմովի անելիքը, 3. նշել կոմսոմովի մասնավոր խնդիրները:

ԿԻՄ-ի սեկցիաների առաջ հարց էր դրվում ամենուրեք համառ աշխատանքով իր շարժերը ներդրել բանվոր յերկտասարդության լայն մասսաներին, դեկավարել նրանց ամենուրեք տնտեսական պայքարը, ուժեղացնել լենինյան դաստիարակությունը ներքին մեջ:

Հետզհետե ԿԻՄ-ի կազմակերպությունների առաջ նոր խնդիրներ էին դրվում. այդ էր պահանջում քաղաքական նոր դրությունը: Նոր դրությունը բնորոշվում էր նրանով, վոր բուրժուազական ժամանակավորապես հաղթահարել էր իր ապրած կրիզիսը, իջնում էր հեղափոխական շարժումների ալիքը և այդ նոր դրությունը բանվոր դասակարգի առաջ դրեց ամենուրեք, համառ, համբերատար պայքար, աշխատավորական լայն մասսաներին կոմունիստական շարժման մեջ ներգրավելու համար:

Յերկրորդ կոնգրեսի հիմնական լուղունքն էր ՎՄԻՆԻՄԻՖ բանվոր յերկտասարդության մասսաներին:

Կոնգրեսը նոր դրությունից յեղելով, վորոշեց, վոր յերկտասարդական կոմունիստական կազմակերպությունները պետք է առանձին ուղարկություն դարձնեն յերկտասարդական խնդրի վրա,

քանի վրա արդեն բոլոր յերկրներում հիմնվել և ամրապնդվել են կոմկուսակցութիւնները, վերոնք կարող են ղեկավարել բանվոր դասակարգի ընդհ. քաղաքական պայքարը: Յերրորդ կոնգրեսն ընդգծեց կոմկուսներին և կոմյերիտմիութեաններին հատուկ խնդիրներ՝ բանվոր դասակարգի պայքարում, ինչպես նաև շէշտեց «միացյալ ճակատի» տակտիկայի անհրաժեշտութիւնը: Հետագայում այդ տակտիկայի կիրառման ընդլիմացան սոցիալիստական յերիտասարդական կազմակերպութիւններին ղեկավարները: Բայց նրանց գլխի վրայով՝ կոմյերիտական կազմակերպութիւնները բանվորական ստորին խավերից սկսեցին իրագործել այդ տակտիկան:

Նույն ժամանակները դոմարվեց արմատյան 15 միութիւններ կոնֆերանս, վորն ուժեղ խիճան հանդիսացավ կոմունիստական յերիտասարդական շարժման զարգացման համար (քննիցին կոմինտերնի վորոշումները, հակամիլիտարիստական պայքարը, կազմակերպչական հարցեր և այլն): Ստեղծվեցին նոր միութիւններ: 1920 թվի վերջերին Սմերեկայի Միացյալ Նահանգներում, Բրազիլիայում ու Արգենտինայում կազմակերպվեցին ԿԻՄ-ական բջիջներ: Մերձավոր և հեռավոր Արեւելքում ուժեղացավ ԿԻՄ-ի ազդեցութիւնը: Միայն Ավստրիայում հհհհհհհ կազմակերպել կոմյերիտմիութեան քիչ թիւ շատ ուժեղ սեկցիա, վորովհետեւ այնտեղ ուժեղ եր ավստրիական «ձախ» սոցիալ-դեմոկրատիան և նրա ազդեցութիւնը յերիտասարդութեան վրա:

Թեև 21 թվին 43 աղգային միութիւններ կային ԿԻՄ-ի մեջ, սակայն բացի ՌԿԾԵՄ-ից, մյուս սեկցիաները քանակով շատ փոքր էին: Անհրաժեշտ եր միջազգային տնտեսական և քաղաքական նոր դրութեան, նոր պայմանների համաձայն փոխել կոմյերիտմիութիւններին աշխատանքի ձևերն ու մեթոդները: Յերկրորդ կոնգրեսում այդ խնդիրը դրվեց իր ամբողջ սրութեամբ: ԿԻՄ-ի յերկրորդ կոնգրեսն իր գործունեութեան վորպես ծրագիր ընդունեց կոմինտերնի յերրորդ կոնգրեսի վորոշումները:

Նոր պայմաններում միութիւնն ամէլի ակտիվ պետք և դադար վեր քաղաքական խնդիրներով, դատնար բանվոր յերիտասարդական լայն մասսաների դասակարգային պայքարի ինքնուրույն զարոյց, վորն ուժեղ ղեկավարութիւն պետք և ստանար տեղական կոմունիստական կուսակցութիւններէ: Այդ մանրամասնորեն արտահայտված և ԿԻՄ-ի բանաձևով «կոմունիստական ինտերնացիոնալի և առանձին յերկրներում կոմկուսակցութիւններին ստեղծումով ու ամրացումով, կոմունիստական յերիտասար-

դական կազմակերպութիւններին դերը ընդհանուր պրոլետարական շարժման մեջ արմատապես փոփոխվում և: Պահպանելով իր նախկին տարիներում ձեռք բերված քաղաքական ակտիվութիւնը, վորն առանձնացնում և նրան սոցիալ-պատրիստական և յենարիստական յերիտասարդական կազմակերպութիւններէ, կոմսոմոլի կազմակերպութիւնը ներկայումս գնում և իր առաջ վորպես հիմնական խնդիր, նեղ, քաղաքականորեն պատրաստված ակտիվութիւլ ընկերներ ընդգրկող կազմակերպութիւնից դառնալ լայն մասսայական, կոմունիստորեն դաստիարակվող հարյուրհազարավոր և միլիոնավոր յերիտասարդ պրոլետարների կազմակերպութիւն»:

Միայն այդպիսով միութիւնը կարող եր վերածվել քաղաքամիլիտն կազմակերպութեան, կոմունիզմի դարոյցի յերիտասարդական միլիոնների համար:

Յերկրորդ կոնգրեսում վճռվեց նաև Միութեան կազմակերպչական վերահսուցումը, արտադրական բջիջների կազմակերպման հիման վրա: Առանձնահատուկ ուշադրութիւն դարձվեց նաև գյուղական կոմսոմոլի շարքերն ընդլայնելու, նրա պրոլետարական ղեկավարութիւնն ուժեղացնելու խնդիրների վրա: Այսպիսով, առաջին անգամ յերկրորդ կոնգրեսում միայն քննվեց գյուղում տարվելիք աշխատանքների հարցերը: Յերկրորդ կոնգրեսն քննարկեց նաև իմպերիալիզմի դեմ դադուլթներում և կիսադադուլթներում սկսված աղգային ադատադրական շարժումները. և դրանց կոմսոմոլին ցույց տալիք մասնակցութեան խընդիրները: Կոնգրեսն առանձին ուշադրութիւն դարձրեց բանվոր յերիտասարդութեան տնտեսական պայքարի հարցերի վրա, շէշտեց պրոֆմիութիւններում կոմունիստական յերիտասարդութեան աշխատանքի և դերի ծավալման անհրաժեշտութիւնը, վորոշում ընդունելով պրոֆմիութիւններում կազմակերպել հեղափոխական ֆրակցիաներ և ուժեղ պայքար ծավալել պրոֆմիութեանական ռեֆորմիզմի դեմ:

Յերկրորդ կոնգրեսն առաջին անգամ լրջորեն դադվեց արդունաբերութեան մեջ աշխատող աշակերտութեան դրութեան բարելավման, ուսանողների մեջ տարվելիք աշխատանքի, ուսանողներին՝ վորպես կուլտուրական ուժի ոգտագործման խնդիրներով, քննարկեց միջազգային պատանեկական շարժման դրութիւնը, նրանց՝ կրոնի և բուրժուական դարոյցի ազդեցութիւնից

ազատագրելու, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վաղուհի դաստիարակելու խնդիրները:

Կապիտալիստական պետութիւնները տենդադին սպառնալիքներ են, իմպերիալիստական նոր պատերազմի նախապատրաստումը՝ յերկրորդ կոնգրեսին նորից թերադրեց քննարկելու պատեհութիւն վստահի աճման խնդիրը՝ կապիտալիզմի հակամիլիտարիստական աշխատանքների ուժեղացման հետ:

ԿԻՄ-ի յերկրորդ կոնգրեսը սերտորեն ամրացրեց միջազգային կոմունիստական յերիտասարդական շարժման կապը համաշխարհային հեղափոխութեան շտաբ՝ կոմինտերնի հետ:

ԿԻՄ-Ի ՅԵՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

Յերրորդ կոնգրեսը կայացավ Մոսկվայում 22 թվի նոյեմբերին: Կոնգրեսը վճռականորեն վերոյեց կադմակերպչորեն անցնել ֆարքիկա-դործարանային բընջների սխառնին և ել ավելի ուժեղացնել հակամիլիտարիստական աշխատանքները:

Յերկրորդ կոնգրեսը, վորն իր աշխատանքներն սկսեց կապիտալի հարձակողական ուժեղացման պայմաններում, քննարկեց այն աշխատանքը, վոր յերկրորդ կոնգրեսի վերջման հիման վրա, նոր պայմաններում ծախարել էյին ԿԻՄ-ի շոկատները:

Յերրորդ կոնգրեսի առաջ ավելի սուր կերպով դրվեց ԿԻՄ-ի շարքերում մնացած «Ավանդարդիլդի» վերջնական ջախջախման խնդիրը: «Ավանդարդիլդի» նոր պայմաններում, յերբ արդեն համաշխարհային կուսակցութիւնները, դառնում եր շախաղանց վտանգավոր: «Ավանդարդիլդի» թխտում եր կոմունիստական կուսակցութիւնների ղեկավարութիւնը կոմսոմոլի վրա: Այդ յերբ կոմսոմիստական կուսակցութիւնների բացակայութեան ուղարմաներում՝ կոմունիստական յերիտասարդական միութիւններն առաջ էյին տանում վոչ միայն յերիտասարդութեան, այլ և ամբողջ բանվոր դասակարգի պայքարը կապիտալիզմի դեմ: «Ավանդարդիլդի» մնացորդների դեմ տարվող պայքարն ահադին վերադարձութիւնների տեղի տվեց: «Ավանդարդիլդի» առանձնապէս չէյին ուզում հրաժարվել դերմանական և իտալական կադմակերպութիւնները: Իսկ նոր պայմաններում՝ «Ավանդարդիլդի» արտադրութիւնները վոչ միայն թերադնոտարում էյին

կոմսոմիստական կուսակցութիւնների դերը, այլ և խոչընդոտներ էյին ստեղծում կոմունիստական յերիտասարդական միութիւնների ավելի լայն մասսայական կադմակերպութեան դառնալուն:

Յերկրորդ կոնգրեսը նշել եր անտեսական, պրոֆիտութեան կան աշխատանքների բնագավառում կոմյունիստիկութիւնների գործնութեան ուղիները: Յերրորդ կոնգրեսը դտավ, վոր կադմակերպութիւններն այդ ուղղութեամբ կամ վոչ մի աշխատանք չեն տարել, կամ շատ թույլ, աննկատելի դործ են կատարել: ԿԻՄ-ի 54 սեկցիաներից միայն 7-ում կար անտեսական, պրոֆիտութեան աշխատանքի մասնավոր բաժին: Պրոֆիտութիւններում կոմսոմոլի ֆրակցիաներ դոյութիւն չունէյին: Պրանսիական, դերմանական և մասնավորապէս իտալական կադմակերպութեանները թխտում էյին անտեսական-պրոֆիտութեան աշխատանքի կարելութիւնն ու այդ աշխատանքն անպատկաւարմոր էյին դտնում: Յերկար վիճարանութիւններից հետո միայն նրանք հրաժարվեցին իրենց սխալ տեսակետներից:

Այս ժամանակաշրջանում ԿԻՄ-ն առաջարկեց Սոցիալիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալին և Սոցիալիստ Յերիտասարդութեան 2½ Ինտերնացիոնալին՝ միասնաբար դուրս գալ պայքարի՝ ուժեղացող կապիտալիստական հարձակողականի դեմ: Ատկայն վերջիվերջո մերժվեց այդ առաջարկը: Այդ հանգամանքը ԿԻՄ-ն աշխատեց ուղտադործել կոմիներաններով, ժողովներով, մամուլով՝ սոցիալիստական յերիտասարդութեան ինտերնացիոնալի դալմանական դեմքը դիմակադերմ անելու համար:

Յերրորդ կոնգրեսի ժամանակաշրջանում արդեն Ֆաշիստական շարժումն սկսել եր ծախարվել: Իտալիայում, Բուլղարիայում և մի շարք այլ յերկրներում տիրապետում եր Ֆաշիստական ռեժիմը: ԿԻՄ-ի կոնգրեսին նախորդող կոմինտերնի չորրորդ կոնգրեսը միջազգային այս նոր պայմաններից յեղնելով՝ ստրատեգիական նոր գիծ և նոր խնդիրներ եր դրել կոմունիստական կուսակցութիւնների առաջ: Այդ խնդիրները դրվում էյին և ԿԻՄ-ի առաջ: Դրանք կայանում էյին հետևյալում՝

1. Համադործակցել կոմկուսակցութեան՝ ֆաշիստական հարձակողականին հարված տալու համար:

2. Ուժեղացնել պայքարը ընդդեմ պատերազմի ուճող վտանգի և ընդդեմ սպեցիֆիստական իլյուզիաների:

3. Կերանել միացյալ ֆրոնտի տալիսին:

4. Բարձրացնել տնտեսական և լուսավորական աշխատանքը կոմսոմոլում:

5. Համախորհրդակցել կոմիտեներին հետ, կենսագործելու համար կոմիտեներին չորրորդ կոնգրեսի վերջումները մի շարք կուսակցությունների մեջ, վերոնց շարքերում կային այդ վերջ-չումների հետ համաձայնվող խմբակներ և հասանքներ:

6. Միջազգային կոմունիստական յերիտասարդական շարժումը վերածել համաշխարհային կոմսոմոլի միացյալ կազմակերպության:

ԿիՄ-ի յերրորդ կոնգրեսի վերջումները՝ յերկրորդ կոնգրեսի վերջումների ալիքի կոնկրետացումն ու զարգացումն էյին, համաձայն միջազգային նոր դրուկյան: Յերրորդ կոնգրեսը հիմնական խնդիր դրեց. —կոմսոմոլը պետք է վերածվի բանվոր յերիտասարդային մասնակցական կազմակերպության:

Միջազգային յերիտասարդության շարժման պատմության մեջ առաջին անգամ ԿիՄ-ի յերրորդ կոնգրեսն էր, վոր մշակեց բանվոր յերիտասարդության տնտեսական պահանջները միջազգային իսկական ծրագիրը: Կոնգրեսն առանձին ուշադրություն նվիրեց պրոլետարական յերիտասարդական սպորտական կազմակերպությունների և միջազգային պատանեկական շարժման խնդիրներին:

ԿիՄ-ի ԶՈՐՐՈՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

ԿիՄ-ի յերրորդ կոնգրեսից մինչև չորրորդ կոնգրեսը (1922-1924 թիվ) անցած 18 ամսվա ժամանակամիջոցը միջազգային հեղափոխական շարժման զարգացման տեսակետից արտակարգ զարթուրություն ունեցող մի ետապ էր: Այս ժամանակամիջոցում տեղի ունեցան նշանակալից անցքեր (Գերմանիայում, Բուլղարիայում, Լեհաստանում): Զորրորդ կոնգրեսը կոմսոմոլի մասնաշաղկան աշխատանքների արդյունքները դառն անբավարար, աշխատանքի վերակառուցումն արտադրական բլիշների հիմունքով՝ չկատարված: Կոնգրեսը նչեց նույնպես վոր քաղաքական, տնտեսական, պրոֆեսիոնալ և հակամիլիտարիստական աշխատանքներն անբավարար են տարվել: Սակայն այս թերությունների կողքին ԿիՄ-ն ունեցել էր աչքի ընկնող նվաճումներ: Նա պայքարել էր կոմիտեների դծի համար, պայքարել էր բարեկադների վրա, կոմունիստական յերիտասարդական բանակները միաձույլ համա-

խմբել էր կոմիտեներին դրոշի շուրջը: Կազմակերպվել էյին ԿիՄ-ի նոր սեկցիաներ:

Այս ժամանակաշրջանում կուսակցության մեջ առաջացած թեքումների դեմ ակտիվ պայքար էր տարել Շվեդիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Գերմանիայի և Բուլղարիայի կոմսոմոլը: Նույն շրջանում ՌիկթենՄ-ն ու ԿիՄ-ը ակտիվ պայքար էյին ծավալել Տրոցկիզմի դեմ:

Միլիտարիզմի դեմ պայքարի, յերիտասարդության հակամիլիտարիստական դաստիարակության գործում ԿիՄ-ի սեկցիաներից առանձնապես Ֆրանսիական, գերմանական սեկցիաները խոչոր աշխատանք էյին տանում: Ֆրանսիական և գերմանական կոմսոմոլը Ռուրի ոկուպացիոն բանակի մեջ քայքայել ու աշխատանք էր տանում: Պատերազմի վտանգի դեմ անցկացվեց պրոպագանդի շտաբ, վորը յերիտասարդական մասնաներին մոթիվացեայի յենթարկեց պատերազմի սպառնալիքի դեմ:

ԿիՄ-ի յերրորդ կոնգրեսն իր սեկցիաների առաջ խնդիր էր դրել լայնորեն զբաղվել բանվոր յերիտասարդության տնտեսական խնդիրներով՝ ակտիվ աշխատանք ծավալելով պրոֆսիությունների մեջ: Սակայն, չնորհվ ունեցելայի ութնդարձման և դեպի այդ աշխատանքները դեռևս դոյություն ունեցող հին, թերադնահատման արամադրություններին, աշխատանքները թույլ էյին ընթացել: Բանվոր յերիտասարդության կոնկրետ պահանջները չուրջ պայքար չէր տարվել: Սեկցիաները բավարարվել էյին միայն այդ ուղղությամբ բնդհանուր աղիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքով: Բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանության, տնտեսական, պրոֆսիոնական աշխատանքների ուղղությամբ ընչ թե չատ կոնկրետ պայքար էր տարել միայն Ֆրանսիական և անգլիական կոմսոմոլը:

Սակայն շնայած աշխատանքի այս թույլ կողմերին, հակառակ սպիտակ տերրորի սաստկանալուն ու սեկցիայի ութնդ հարձակողականին, ինչպես նաև մի քանի սեկցիաների (Իտալական, Բուլղարական) ընդհատակյա աշխատանքի անցնելուն, ԿիՄ-ը ձեռք էր գրավել քանակական և վորակական զգալի նվաճումներ: Գերմանական կոմսոմոլը ԿիՄ-ի յերրորդ կոնգրեսից մինչև չորրորդ կոնգրեսն ընկած ժամանակամիջոցում 20.000-ից բարձրացել էր 40.000-ի: Ֆրանսիականը՝ 4000-ից 7000-ի, իտալականը՝ 2000-ից 4500-ի, անգլիականը՝ 600-ից 1500-ի, չեխոսլովականը՝ 8000-ից 13.500-ի, ամերիկյանը՝ (ՀԱՄՆ) 2000-ից 5000-ի և այլն: Յեր-

բորդ կոնդրերից հետո կանադայում, Բուլղարիայում և Չեխոսլովակիայում կազմակերպվել էյին նոր սեկցիաները։ Չորրորդ կոնդրերը կազմակերպություններին առաջ խնդիր դրեց իսկապես դառնալ մասնաձևային— յերիտասարդական—հեղափոխական կազմակերպություն, սրաշաղկապել բանվոր յերիտասարդության ամենորշա շահերը միապալ Ֆրոնտի տակադիկայի հիման վրա։ Կոնդրերը ուղիներ ցույց տվեց կոմունիստական յերիտասարդական շարժման բուլշևիզացիայի համար։ Կոնդրերը սուր կերպով դրեց կոմսոմոլի՝ պրոֆմիթյունների մեջ տարած աշխատանքներում վճռական բեկում մացնելու, պրոֆմիթյուններում յերիտասարդական Ֆրոնտիաներ կազմակերպելու խնդիրները, վրոնք պետք է աշխատեցին կուսակցական Ֆրոնտիաների հետ ամենասերտ կապ պահպանելով։

Չորրորդ կոնդրերը կրկին քննարկեց միության կազմակերպչական վերակառուցման (ձևափոխության արտադրական բլիշներ) և դադարական աշխատանքների խնդիրները, սեկցիաներին առաջադրեց ուժեղացնել պայքարը գյուղում՝ բառարկաբանություն յերիտասարդության նվաճման համար, նշեց այդ աշխատանքում քաղաքի կոմսոմոլի ուղևորության անհրաժեշտությունը դադարական կազմակերպություններին։

Պատերազմի վտանգի անընդհատ աճման պայմաններում կոնդրերը բացառիկ ուշադրություն նվիրեց նաև հակամիլիտարիստական պայքարի խնդիրներին վրա, ամենի կոնկրետացրեց ԿԻՄ-ի սեկցիաներին առաջ դրվող հակամիլիտարիստական հարցերը, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական կոնֆլիկտներ վերածելու խնդիրները։ Այդ առթիվ կոնդրերի կայացրած վորոշումներին մեջ առված է՝ «Մտական ժամանակներում ԿԻՄ-ը և կոմունիստական յերիտասարդական միությունները պետք է լայն ուշադրություն նվիրեն միլիտարիզմի դեմ սկզբունքային դիրքավորումը, հիմնական և կոնկրետ կերպով մշակելու համար, ուժեղացնեն պայքարը պատերազմի վտանգի դեմ ու միջոցներ ձևաք առնեն միության մեջ և միությունից դուրս ամենի լայնորեն մասնաշաղկապանցելու այդ հիմնական խնդիրները։ Նրանք պետք է նշանեն առաջ տանելու պայքարը բուրժուական միլիտարիզմի և նոր իմպերիալիստական պատերազմի վտանգի դեմ, դարձնելով այդ՝ միությունների մասնաշաղկապ կազմակերպություն դառնալու համար տարված քնդհանուր գործունեության մի մասը։ Բացի այդ, ԿԻՄ-ը և կոմունիստական յերիտասարդական միություններն ամենի շատ ուշադրություն պետք է նվիրեն, քան մինչև այժմ, ստեղծելու համար

դինափոխական բլիշներ։ Այս խնդիրը մոտակա ժամանակներին համար կանգնած է վորպես հիմնական խնդիր, բուրժ միությունների առաջ։

Չորրորդ կոնդրերը նույնպես խնդիր դրեց առափել ևս ուշադիր լինելու սպորտային շարժման խնդիրներին, սպորտաբանական սպորտային կազմակերպությունների մեջ ստեղծել կոմյունիստական Ֆրոնտիաներ և հետզհետե ուժեղացնել կարմիր Սպորտիստների դերերը։

Կոմսոմոլի ղեկավարության տակ— բանվոր յերիտասարդության մեծամասնության նվաճման խոչնդոտում էյին ԿԻՄ-ի գաղափարաբան թշնամիները, սոցիալ դեմոկրատիան, Փաշիստական և կոմունիստական յերիտասարդական կազմակերպությունները, մանափանդ վերջինները, վրոնք միլիտանավոր յերիտասարդություն առնելին իրենց շարքերում։ 1925 թվին, կաթոլիկական Ֆերիտատարդական Ինտերնացիոնալն իր շարքերումն ուներ յերկուս և կես միլիոնից ավելի յերիտասարդություն, վորից 1.400.000-ը միայն Գերմանիայում, 515.000-ը Իտալիայում, 180.000-ը Չեխոսլովակիայում, 170.000-ը Ֆրանսիայում։ Նույնպես բախական ուժեղ կազմակերպություններ ունեյին սոցիալիստական յերիտասարդական միությունները, Փաշիստները։ Կոնդրերը պահանջեց այդ կազմակերպությունների դեմ ուժեղացնել դրոհը և դրանց քայքայման հիման վրա ԿԻՄ-ը դարձնել իսկական մասնաշաղկապ կազմակերպություն։

Կոնդրերը զբաղվեց նաև դադարական և կիսադադարական յերկրներում կոմսոմոլի աշխատանքի հարցերով և կոնկրետ ուղիներ նշեց այդ աշխատանքների համար։

Չորրորդ կոնդրերը մի անգամ ևս շեշտեց ԿԻՄ-ի սեկցիաներում լինիլյան դաստիարակությունն ուժեղացնելու և բանվոր յերիտասարդության մասնաների նվաճմանն ամենի լայն Ֆրոնտով մոտենալու անհրաժեշտությունը։

Չորրորդ կոնդրերը հատուկ նշանակություն ունեցավ ԿԻՄ-ի պատմության մեջ։ Նա սոցիալ դեմոկրատիայի դեմ դաժան պայքարի կոնդրեսն էր, միության և կուսակցության ներսում յերաժեթեումների դեմ անողոք պայքարի կոնդրես։ ԿԻՄ-ը Կոմինտերի լավագույն ոգնականը հանդիսացավ այս ժամանակամիջոցում անջնջելի դեմ մղված պայքարում, վրոնք դերադնահատում էյին բուրժուազիայի ուժերը և թերադնահատում հեղափոխության ու-

ժեքը: Այս շրջանում ԿԻՄ-ն անհաշտ պայքար տարազ նաև ուլ-
տրա-ձախերի դեմ՝ Կոմիտեների գլխավոր դժի համար:

ԿԻՄ-ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ 5-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ

ԿԻՄ-ի 4-րդ կոնգրեսից մինչև 5-րդ կոնգրեսն անցավ 4 տա-
րի. այդ ժամանակամիջոցում տեղի ունեցան պատմական, դասա-
կարգային վիթխարի մարտեր ու պրոլետարական հեղափոխու-
թյուններ: Միաժամանակ՝ այս շրջանը բնորոշում է, վորպես կա-
պիտալիզմի հակասությունների զարգացման շրջան: 1924-28 թը-
վերին, 4-րդ կոնգրեսից մինչև 5-րդ կոնգրեսը, տեղի ունեցավ
անգլիական հանքագործների հակա գործադուլը (1926 թ.), Չի-
նաստանի հակաիմպերիալիստական պայքարը՝ Կանտոնի կոմու-
նան: Այս ժամանակաշրջանում տեղի ունեցավ Վիենայի բանվոր-
ների հերոսական ապստամբությունը՝ Փաշիվի դեմ, Նույնպես
և մի շարք խոշոր ապստամբություններ գաղութային և կիսագա-
ղութային յերկրներում (Մորոկկո, Սիրիա և այլն):

Մյուս կողմից այդ շարժումների պատմությունը և սոցիալիս-
տական շինարարության դժվարություններն ոգտադործվեցին
ժանր-բուրժուական տարրերի կողմից կուսակցության ներսում,
Համկոմիկուսի և Կոմինտերնի քաղաքական դժի դեմ հարձակվելու
համար: Սակայն այդ պայքարում Տրոցկիզմը ջախջախիչ հա-
վածներ ստացավ:

Սյուպիսի բնորոշ պայմանների ֆոնի վրա յե ընթացել ԿԻՄ-ի
աշխատանքն ու պայքարը 4-րդ կոնգրեսից մինչև համաշխարհա-
յին 5-րդ կոնգրեսը:

Միջազգային պրոլետարիատի դասակարգային այդ բոլոր
մարտերին ԿԻՄ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել: Նա պայ-
քի փողոցներում, նա ակտիվ մասնակցել է անգլիական հանքա-
գործների մեծ գործադուլին, նա ուժեղ հակամիլիտարիստական
պայքար է ծավալել՝ ընդդեմ նոր իմպերիալիստական պատերազ-
մի, ընդդեմ գաղութային թալանի: Նա պայքարել է Մարոկկո-
յում և Սիրիայում իմպերիալիզմի կողմից կատարված վտանգու-
թյունների դեմ:

ԿԻՄ-ի առանձնապես ֆրանսիական սեկցիան այդ հակաիմպե-
րիալիստական պայքարում ձեռք է բերել խոշոր նվաճումներ: Նրա
բանակում տարած աշխատանքի շնորհիվ ռիֆերի (Մարոկկո-Աֆ-

րիկա) դեմ պատերազմելու ուղարկված զորքերը հաճախ հրաժար-
վում էյին պաշարել ապստամբների դեմ: Նրա աշխատանքի շնոր-
հիվ Ռուսում յեղադրանում էյին ֆրանսիական և դերմանական
ղինվորները:

ԿԻՄ-ի համար խոշորագույն նվաճումներից մեկն էր չինական
կոմսոմոլը, վորը բաղմահաղար կազմակերպություն դառավ և
կուլմեց չինական հեղափոխության բոցերի մեջ:

Սակայն այս բոլոր նվաճումների զուգընթաց կոնգրեսը նորից
նշեց, վոր ԿԻՄ-ի սեկցիաները դեռևս հեռու յեն ԿԻՄ-ի 2-րդ կոն-
գրեսի մարտական առաջադրանքը կատարելուց՝ կոմյերիստիս-
տներ մասսայական կազմակերպություն դարձնելու մասին, վո-
րովհետե ԿԻՄ-ի սեկցիաներն դեռևս չեն սովորել և իրենց ամենոր-
յա աշխատանքի մեթոդ չեն դարձրել պայքարել բանվոր յերիտա-
սարգություն առույա տնտեսական պահանջների համար, մի պայ-
քար, վորը պետք էր վոչ միայն առաջ տանել, այլև հմտորեն չաղ-
կապել կոմունիստական շարժման ընդհանուր խնդիրների հետ:
ԿԻՄ-ի սեկցիաները դեռևս իրենց աշխատանքներում չեյին կարո-
ղացել ապահովել այն վճռական շրջադարձը, վորն անհրաժեշտ էր
մասսայական կազմակերպություն դառնալու համար:

Կոնգրեսը նշեց, վոր սեկցիաների քաղաքական ակտիվություն-
նը դեռևս անբավարար է, վոր դեռևս չատ թույլ աշխատանք է
տարվում պրոֆիուլեկնական և սոցիոտային կազմակեր-
պությունների մեջ, վոր միությունները չեն վերակառուցել
իրենց աշխատանքները, չեն ոգտադործում «ոթանդակ լը-
իրենց աշխատանքները, չեն կազմակերպում յերկրյան
ծակները»: Նրանց աշխատանքի պրակտիկայում յերկրյան
մեջ գալիս սոցիալ-դեմոկրատական ձեվերի մնացորդներ, վո-
րոնք արդեւակում են մասսայական-բայլչեվիկյան աշխատանքը:

ԿԻՄ-ի 5-րդ կոնգրեսը նշեց ինքնաքննադատության անբավա-
րար, չափազանց թույլ ծավալումն արտասահմանյան սեկցիանե-
րում, վորը գլխավոր խոչնդոտներից մեկն է հանդիսանում ԿԻՄ-ի
սեկցիաների քաղաքական ակտիվության բարձրացման:

Ինչպես ԿԻՄ-ի մյուս կոնգրեսների նույնպես և 5-րդ կոնգ-
րեսի քննած առանցքային խնդիրներից էր հակամիլիտարիստա-
կան աշխատանքի դրվածքը և կոմյերիստիստիկյան նվաճումներն
ու դեֆեկտներն այդ կարեւորագույն բնադավառում: Կոնգրեսն
առաջարկեց հակամիլիտարիստական աշխատանքի նոր խնդիրներ
և նոր մեթոդներ: Խնդիր դրվեց ուժեղացնել աշխատանքը
պրակտիկաների և զինվորների մեջ, նրանց՝ մասնակի պահանջներ

